

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՔԷՇԻՇԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ

Լիբանանի Հայոց Թեմին տասնեօթ տարիներու Առաջնորդ՝ Արամ Արք. Քէշիշեան, Չորեքշաբթի, 28 Յունիս, 1995ին, ընտրուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, Գարեգին Բ.ի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրութենէն շուրջ երեք ամիս ետք:

Նորընտիր Վեհափառը ծնած է Պէյրութ (Լիբանան): Նախնական կրթութենէն ետք, Հոկտեմբեր 1961ին կ'ընտրուի Կիլիկիոյ Կաթողիկոսարանին ժառանգաւորաց Վարժարանը (Անթիլիաս, Լիբանան):

Քառամեայ շրջանի աւարտումէն ետք կը ձեռնադրուի Սարկաւազ (1965ին), ապա Կուսակրօն Աբեղայ (1968ին):

1980ին կը ստանայ Ծայրագոյն Վարդապետութեան Աստիճան:

1978ին, տակաւին ուսանող Ա. Մ. Նահանգներու մէջ, կ'ընտրուի Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդական տեղապահ: Եւ որպէս տեղապահ, տարի մը ծառայելէ յետոյ Լիբանանի թեմէն ներս, կ'ընտրուի Լիբանանի Հայոց Առաջնորդ եւ յաջորդ օրն իսկ կը ձեռնադրուի Եպիսկոպոս՝ Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսին կողմէ՝ Անթիլիասի վանքին մէջ:

Անթիլիասի վանքէն ներս ստանձնած է զանազան պաշտօններ՝ փոխ-տեսուչի, դասախօսի եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջ եկեղեցական ընդհանուր քարտուղարի հանգամանքներով: Յաջորդաբար, ան իր գործօն մասնակցութիւնը պիտի բերէր միջազգային եկեղեցական այդ մեծ շարժումին թէ՛ տեղական եւ թէ՛ արեւելեան ու միջագոյն մակարդակներու վրայ:

Իր ստանձնած զանազան պատասխանատուութիւններու կողքին, Արամ Արք. հեղինակած է նաեւ շարք մը հրատարակութիւններ: Հայ թէ օտար պարբերականներու մէջ ալ ունի գրութիւններ:

Ըստ հայ մամուլի հաղորդումներուն, Արամ Արք., որպէս Լիբանանի Առաջնորդ, ցուցաբերած է բարոյական ու վարչական յատկու-



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՔԷՇԻՇԵԱՆ
ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՄԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

թիւներն իր եկեղեցական ասպարէզի ընթացքին, ծայր աստիճան փափուկ ժամանակաշրջանի մը մէջ:

Արամ Ա. Կաթողիկոսի հայրապետական օծումը մեծ հանդիսութեամբ կը կատարուի Շաբաթ, 1 Յուլիս, 1995ին, Ամենայն Հայոց Կթղ.՝ Գարեգին Ա. Սարգիսեանի իսկ ձեռքով:

Արամ Ա. Վեհափառը «Մէկ եկեղեցի, մէկ ժողովուրդ եւ մէկ հայրենիք» բացայայտ կարգախօսով ստանձնեց Կիլիկիոյ Կաթողիկոսական դարաւոր Աթոռը: Ան յայտարարեց, որ իր կարողութեան սահմաններուն մէջ պիտի փորձէ զարգացնել Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համազգային դերը եւ վերահաստատել Սբ. Էջմիածնի Մայր Աթոռին հետ սկսուած կարեւոր գործակցութիւնը:

Վստահ ենք, որ Կիլիկիոյ նորընտիր Գահակալ Հայրապետը պիտի զխոնայ հայրենիքին հանդէպ կիրարկել Տիրոջ հրահանգը.՝ «Տուէք կայսրին՝ ինչ որ կայսրինն է եւ Աստուծոյ՝ ինչ որ Աստուծոյ է»:

Վստահ ենք նաեւ, որ գալիք տարիները դեռ աւելի պիտի բացայայտեն Վեհափառ Արամ Ա. Քէշիշեանի ինքնութիւնը՝ ազգային, եկեղեցական ու հոգեւոր տեսակէտէն:

Կ'սկնկալուի որ շարունակուին կաթողիկոսական զոյգ Աթոռներու մերձեցումը գործակցութիւնը եւ միասնականութիւնը՝ միութեան եւ ամբողջականութեան շինիչ կամարը նետելով հայ ժողովուրդի երկնակամարին վրայ:

Մխիթարեան Միաբանութիւնը եւ «Բազմապէս»ի խմբագրութիւնը կու գան ձայնակցելու համազգային վառ մաղթանքներուն եւ ակնկալութիւններուն, յուսալով որ իսկապէս պիտի սկսի զանազան նուաճումներով յատկանշուած յարաճուն շրջան մը՝ Հայ ժողովուրդին եւ Հայ Եկեղեցւոյ պայծառութեան համար:

Հ. Տ. ԵԱՐՏԸՄԵԱՆ